2021-2022 ուստարվա Աբովյանի կրթահամալիրի

8-րդ Բ դասարանի դասղեկի տարեկան հաշվետվություն

8-րդ Բ դասարանը բաղկացած է 30 աշակերտից: Աշակերտները ունեն բավարար ընդունակություններ, դասարանում սովորում է 1 ԿԱՊԿՈԻ աշակերտ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանում սովորում են նաև խիստ կարիքավոր ընտաիքի երեխաներ:

Այդ ընտանիքներին ցուցաբերվել է աջակցություն և դասագրքերը տրամադրվել են անվճար և զեղչված տարբերակներով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների մեջ նախատեսված աշխատանքները կատարվել են պատշաճ կերպով:

Ամբողջ տարվա ընթացքում ուշադրության կենտրոնում եմ պահել աշակերտների վարքը, առաջադիմությունը , կապ եմ պահել ծնողների հետ ,քննարկել ենք խնդրահարույց հարցեր:

Տարվա ընթացքում հրավիրել եմ 2 ծնողական ժողով, մասնակցել են ծնողների մեծ մասը, իսկ մյուսները ՝աշխատանքի լինելու պատճառով այցելել են դպրոց յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվող ծնող-ուսուցիչ հանդիպման ժամանակ:

Ծնողների հետ քննարկել ենք տարաբնույթ հարցեր, փորձել ենք գտնել ընդհանուր եզրույթներ, կազմակերպել փոքրիկ էքսկուրսիաներ և այլ հուզող հարցեր / բացակայություն,կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցային փոխօգնություն, հանդուրժողականություն/:

Աշակերտների հետ զրույցների ժամանակ մեծ ուշադրություն եմ դարձրել գեղագիտական, հոգևոր, ֆիզիկական,մտավոր, աշխատանքային, բնապահպանական դաստիարակչական թեմաներին, ունեցել ենք բուռն քննարկումներ:

Ուսումնական տարվա սկզբին կազմել եմ աշակերտների անվանացանկը, ճշտել եմ աշակերտների սոցիալական վիճակը, կազմել եմ օգնության կարիք ունեցող աշակերտներիի ցուցակը, այլ ուսումնական հաստատություն հաճախող աշակերտների ցանկը, բոլոր աշակերտներին ապահովել եմ դասագրքերով:

Ամենօրյա աշխատանք

- Հետևել եմ աշակերտների բացակայություններին:
- Ուշադրություն եմ դարձրել կարգապահությանը:
- Զրուցել եմ այն աշակերտների հետ, ովքեր դասին ճիշտ չեն դրսևորել իրենց:
- Ստուգել եմ դասագրքերի և տնային աշխատանքների առկայությանը և տեղեկացրել եմ ծնողներին:
- Հետևել եմ ,որ դասապրոցեսին հեռախոսներ չօգտագործեն:

Ամենամսյա աշխատանք

- Կազմակերպել ենք քննարկումներ՝ առաջացած տարաձայնությունները հարթելու համար:
- Խոսել ենք պարտականությունների և իրավունքների մասին:
- Ուշադրություն ենք դարձրել ամսվա հոբելյարներին:
- Քննարկել ենք վարքի և առաջադիմության հետ առնչվող հարցեր:
- Հետևել ենք գույքի և դասասենյակի պահպանմանը :

Տարեկան աշխատանք

Տարվա ընթացքում կազմակերպվող միջոցառումներին ցուցաբերել եմ աջակցություն, կազմակերպել եմ կինոդիտում, «Իմ կյանքը համայնքում» ծրագրի շրջանակներում հյուրընկալել ենք Ստեփանավանի դպրոցի 1 աշակերտի, կազմակերպել ենք զբոսանքներ, զանազան քննարկումներ, մասնակցել ենք շաբաթօրյակին, կազմակերպել եմ տարեվերջյան էքսկուրսիա:

Գեղագիտական դաստիարակության մասին խոսելիս ունեցել եմ տղաների և աղջիկներ հետ առանձին զրույցներ , խոսել ենք իրենց արտաքին տեսքի՝ սանրվածք, հագուստ, աքսեսուարներ, հիգիենա և այլ թեմաների մասին:

Հոգևորի մասին խոսելիս մեծ ուշադրություն եմ դարձրել այնպիսի թեմաներին, ինչպիսիք են՝ սեր, հարգանք միմյանց նկատմամբ, հանդուրժողականություն, պատասխանատվություն , հոգատարություն և այլն:

Ֆիզիկական դաստիարակության մեջ շեշտը դրել ենք մարմնի կառուցվածքի, ճկունության, ճիշտ սննման վրա:

Աշխատանքի կարևորության մասին խոսել ենք գրեթ ամեն դասաժամից հետո ՝ փորձելով աշակերտներին կենտրոնացնենք ցանկացած մանր թվացող , բայց կարևոր աշխատանքի վրա/ գրատախտակ մաքրել, նստարանները ուղղել, հատակից վերցնել մեծ թղթի կտորները, մաքրել և վերանորոգել աղտոտված կամ թեթև վնասված գույքը և այլն;

Կարևոր նշանակություն եմ տվել ***բնապահպանական դաստիարակությանը***, սեփական օրինակով ցույց եմ տվել, թե ինչպես պետք է սիրել ու պահպանել մայր բնությունը, մաքրել, չաղտոտել :

Դեկտեմբեր ամսվա վերջում 8-րդ ՝ դասարանի աշակերտները զարդարեցին դասասենյակը:

Դեկտեմբերին՝ ամանորյա տոներին ընդառաջ, կազմակերպեցինք խաղ **"Secret Santa"** խորագրով , որին մասնակցեցին բոլոր աշակերտները ՝ դասղեկը ներառյալ: Աշակերտները պատրաստել էին նվերներ միմյանց համար :

Մարտ ամսին 8-րդ ՝ դասարանի որոշ աշակերտներ մասնակցեցին Եղիշե Չարենցի 125 ամյակին նվիրված միջոցառմանը:

Մայիս ամսին դասարանը մասնակցեց ռուսաց լեզվի ուսուցչուհի Ա. **Ղազարյանի կազմակերպած *«Երաժշտությունն իմ կյանքում»* միջոցառմանը:**